

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՆԵՐ:

Հայրենի գինեկ 5 ուրբի (փոստի ծախսով): Օտարաբաղաբա-  
ցի բաժանորդները պիտի գրեն այս հասցեով. Вѣдѣніе. Вѣдѣ-  
ніе Армянскаго Гезетна. Мѣсяцъ.  
Թիֆլիսում կարելի է ստորագրել խմբագրատան մէջ (Երթու-  
նու տուն) և պ. Ծատուրեանցի խանութում:

# ՄԱՅԻՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԳՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ:

Մասնաւոր յայտարարութիւն տպել տուողը պիտի վճարէ 10  
Հասարակ տարի համար 1 կոպէկ արծաթ: Յայտարարութիւններ  
տպելուն հայերէն, ռուսերէն, վրացերէն, նրախարէն, գերմա-  
ներէն և թուրքերէն:

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱՐԱԹԵՐԻՐ

### ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միւր ամէն տարի համար, ամենքը մինի  
համար — և երբեք տեսութիւն: Վրաց  
գրական լրագրի: Նամակ Զարաթաից: Նա-  
մակ Ղուրայից: Նամակ Համախոյ: Յովսէփ  
Լիֆանդեանցի հոգեհանգիստ: Ներքին լուրեր:—  
Արտաքին տեսութիւն: Հիւսիսարեւել: Ամե-  
րիկա: Իտալիա: Նամակ Պարսկաստանից: Նա-  
մակ Յիւրիսից:— Խաւան լուրեր:— Առեւտրա-  
կան:— Յայտարարութիւններ:

#### ՄԻՆԸ ԱՄԷՆՔԻ ՀԱՄԱՐ ԱՄԷՆՔԻ ՄԻՆԻ ՀԱՄԱՐ

«Մշակի» անցեալ համարներէն մինի մէջ  
մենք աշխատել էինք նկարագրել մեր գիւղա-  
կան ազգաբնակչութեան անմիջական գրու-  
թիւնը: Մի և նոյն կարելի է ասել շատ  
փոքր զանազանութեամբ և մեր քաղաքի  
մէջ ապրող բնակիչներէն փերաբնակները:  
Պարսկից յետոյ ինքն ըստ ինքեան ծագումէ  
հարցը չի կարելի արգելադրել որ և ինչ կերպով  
օգնել նորան: Այդ հարցին կարելի է լսել  
զանազան պատասխաններ. հարկաւոր է մեր  
գիւղերում բնակող կանոնաւոր ուսումնա-  
բներ, ծանօթացել գիւղացոյ երկրի մշա-  
կութեան և արհեստներէն առաւել յաւ ձեռքի  
հետ, նոցա նոհապետական գործիքները փո-  
խարինել առաւել լաւ, կատարելագործուած  
մեքենաներով և այլն: Ինքա բոլորն էլ գե-  
ղելի բաներ են, բայց այս բոլորն նոցա  
հասկանալի են միայն մասնաւոր անձանց զոհա-  
բերութիւններով: որոնք շատ հազուադէպ  
երևոյթներ են մեզ սուր, իսկ ընդհանուրի  
համար նոցա կը մնան անհասկանալի, նա-  
խելով նորա անասական գրութեանը, որ  
կարծաէ հիմքից վերանորոգուելու: Ուրեմն  
խնդիրը նորանուստէն է, թէ չի կարելի ար-  
գելոք նորան օգնել իւր ներկայ գրութեան  
մէջ:

Մի ժամանակ (մասամբ և այժմ) Եւրո-  
պայի աշխատող զարդ տասնամյա տակի  
վատ գրութեան մէջ էր քան թէ մերը:  
Փոքրածիւր, բայց նիւթական ոյժ ունեցող  
մարդիկ ճնշում, հարստահարուած էին աւելի  
բազմաթիւ, բայց չքաւոր դասը, որի քըր-  
տիները թափուած էր միայն առաջինների զըր-  
պանները լայնացնելու համար: Ամենալաւ  
միջոցը այդ գրութեանց ազատուելու համար  
նոցա գտան զանազան ընկերակցութե-  
թիւններ, որոնք թէեւ ոչ յանկարծ,  
բայց հաստատ ու ապահով քայլերով առ-  
նում են դէպի իւրեանց նպատակը — քաւոր  
բայց բազմաթիւ դասի բարօրութիւնը:

Թէ որքան օգտաւոր են այդպիսի ընկե-  
րութիւնները, կարելի է տեսնել այն ընդ-  
հանուր գործադրութիւնից, որ նոցա գտան  
Եւրոպայում: Այսուհետ համարեա բոլոր աշ-  
խատող ընկերութիւնները ցանցերի նման  
պատում են նոցա այսօր: Այս րոպէիս Գեր-  
մանիայում հաշվում են 1500-ից աւելի միայն  
փոխառու ընկերութիւններ: Նոյնը կարելի է  
ասել և միւս աշխատող ընկերութեան վերաբերու-  
թեամբ: Որոշաւորապէս արդէն եղի են  
առաջին յաջող փորձերը ժողովրդի պիտոյք-  
ներին կատարելապէս համապատասխանող  
գիւղական փոխառու ընկերութիւններ հիմ-  
նելու:

նկու, (թուով 40-ից աւելի մինչև 1872 թ.)  
որովհետեւ մինչև այժմ եղած գաւառական  
բանկերը թէեւ շատ բազմաթիւ էին (2—3  
հազար) բայց պաշտօնական ձև ունենալով  
չէին կարողանում հասնել իւրեանց բուն  
նպատակին: Մենք լսում ենք, որ մեր հա-  
րեան վրացոց մէջ արդէն զարթել է այդ  
միտքը և նոցա շուտով ունենալու են մի  
ընկերութիւն քաղաքի արհեստաւորների մէջ:

Այդքան բազմաթիւ փորձերից յետոյ,  
որոնք զանազան կլիմաների տակ, զանազան  
հանգամանքներում հաստատուում են մի և  
նոյն միտքը, թէ գիւղական փոխառու ընկե-  
րութիւնները համարելու է ամենալաւ միջ-  
ոցից միւր ժողովրդի տնտեսական գրութիւնը  
բարձրացնելու համար, անկարելի է այլ ևս  
կասկածել նոցա օգտակարութեան մէջ, նա  
մասնաւոր, որ մեր շահուելով ուրիշ աղ-  
գիւրի երկարամեայ փորձերից կարող ենք չը  
կրկնել այս սխալները, որոնք անտարակոյս  
պատահելու էին առաջին փորձերի ժամանակ:  
Այդ իսկ պատճառով «Մշակի» անցեալ  
համարներում առաջարկուեցաւ մի հատըն-  
տեա փոխութիւններով կարող է յարմարուել մեր  
կանոնները թէպէտ նոյն լրագրի այս և ան-  
ցեալ տարեկաններում եղի են այս նիւթին  
ուղղակի կամ կողմնակի վերաբերող յո-  
ղուածներ, բայց նա այնքան նոր է մեր ժո-  
ղովրդի համար, որ մենք աւելորդ չենք  
համարում դարձեալ բացատրել նոցա բուն  
նպատակն և էութիւնը:

Ասեմք մի գիւղացի 3 մանկէթի ցորեն  
առաւ, ցանց և հունձը ծախելուց յետոյ  
ստացաւ 15 մանկէթ: Այդ 15 մանկէթը ար-  
դիւնք էր այն 3 մանկէթի, որով նա ցորեն  
առաւ և այն աշխատանքի, որ նա գործ գրեց  
դորա վերայ: Մի արհեստաւոր մանկէթովէսի  
կաշի առաւ, կոշիկ կարեց և ծախեց 4 մա-  
նկէթով: Այդ չորս մանկէթը նոյնպէս ար-  
դիւնք էր այն մանկէթովէսի, որով նա կաշի  
առաւ և այն աշխատանքի, որ նա գործ  
գրեց դորա վերայ: Այդպէս էլ շատ դէպ-  
քերում մի բան արդիւնաբերելու համար  
բացի երկու սկզբնական գործիքներից՝ բնու-  
թեան ու աշխատանքից, հարկաւոր է և  
երրորդը. — կապիտալը, որ առաջին երկուսի  
արդաւորն է: Մեր շարաւորութեան գլխաւոր  
արմատը նորանուստէն է, որ շատ անգամ առ-  
ողջ, աշխատելու եռանդ և բոլոր յարմա-  
րութիւններն ունեցող մարդը, ապրելով  
առատ, բերրի բնութեան մէջ, ստիպուած է  
լինում անգործադրելի թողնել իւր ուժերը,  
որովհետեւ չ'ունի դորա համար անհրաժեշտ  
երրորդ միջոցը՝ կապիտալ: Ետեւորը տեսած  
կը լինեն այսպիսի օրինակ մի գիւղացի, որ  
հաստատ համոզուած է, թէ ամբողջ ձմեռը  
սպաւորութիւն անելով կարող է 50—60  
մանկէթ փող աշխատել, շատ անգամ ստի-  
պուած է լինում ոտները ծալած ամեն նըս-  
տել, որովհետեւ չ'ունի անհրաժեշտ 25—30  
մանկէթը ձի ու սալ զննելու համար:

Ի՞նչ անէ նա դիմէ քաղաքական կամ  
հասարակական բանկերին՝ նրանից զրաւ կը

պահանջեն. և այդ պահանջը չի կարող  
լցուցանել նա աղքատիկ խրճիթը: Մաս-  
նաւոր մարդկորքան էլ լաւ կողմերից ծա-  
նաչի նորան, արձեալ չի կարող նորան գու-  
մար հաւատաւ որովհետեւ նա իրեն մարդ  
միշտ ենթակ է պատահարներին այսօր  
առողջ է, վաղ կարող է ոտները ձգել. հե-  
տեւորք նա ստիպուած է կամ բոլորովին  
մերժել նորա և կամ այնպիսի սարսափելի  
տոկոսներ նշանակել, որոնց տակ նա երբեք  
չի կարող վերականգնել, այլ աւելի կը խրուի  
պարտքի մէջ: Այդ կերպով ուրեմն, ի գուր  
տեղը կորչուէ մի ոյժ, որ կարող է օգուտ  
տալ իւրեան և հասարակութեանը: Ահա  
այդպիսի կարեւորներին, որոնք արդիւնա-  
բերելու ամենաարմատութիւններն ունեն  
բացի զառաջագոյնը, միջոց տալ չափաւոր տոկոս-  
ներով փող ձեռք բերելու, — է գիւղական  
փոխառու ընկերութիւնների խնդիրը:

Այդ խնդիրը երկար ժամանակ երեւում էր  
անլուծանելի վերջապէս փոխառած պա-  
տասխանատուութեան մեծ սկիզբը փառաւոր  
վճիռ տուել նորան: Այդ սկիզբը կայա-  
նուած է հետեւեալով. քանի մի մարդիկ, ո-  
րոնք զրուս են փողի անհրաժեշտութեան  
իւրեանց գործունէութեան համար, հաւաք-  
վում են միասեղ և գումար են փոխ ու-  
ղում մի տեղից այն պայմանով, որ նոցանից  
ամէն մէկը պատասխանատու է իւր ընկերոջ  
հաջորած վնասի համար: Այդ պատաս-  
խանատուութիւնը լինում է նիւթական  
և բարոյական: Նիւթականը կայանում է  
նորանում, որ ընկերութեան բոլոր անդա-  
մները իւրեանց ունեցած շահուցեալով պա-  
տասխանատու են գումարի այն մասի համար  
որ իւրեանց ընկերը չի կարող վճարել: Բայց  
զա երկրորդական անգ է բռնում, որովհետեւ  
ընկերութեան անդամները կարող են բոլորովին  
սեփականութիւն չունեցող մարդիկ լինել  
և հենց այդպէսներին օգնելու համար է, որ  
հիմնվում են ընկերութիւնը: Գլխաւոր գրա-  
ւականը այստեղ բարոյական երաշխաւորու-  
թիւնն է. անդամները ընտրվում են ոչ թէ  
նոցա կարողութեանը, այլ անձնական յաւ-  
կութիւններին նայելով, իսկ երբ աշխատող,  
գործին հմուտ մարդը գումար էլ ունի իւր  
ձեռքին, նա այնպէս կը շահեցնի նորան, որ  
հնչողութեամբ կարող է վճարել թէ իւր  
պարտքը և թէ նորա շահը: Միայն միայն  
անակնկալ դիպուածները (հիւանդութիւն,  
վաղաժամանակեայ մահ և այլն), բայց զոքա  
անկարծելի է, որ ամբողջ ընկերութեանը  
միասին պատահելին, եթէ պատահեն անգամ  
միմիայն կամ երկուսին, շատ զգալի չի լինիլ  
միւսների համար բաժանել այդ փնտր մի-  
մեանց մէջ:

Ուրեմն, էական տարբերութիւնը ընկե-  
րութեան և առանձին անհատի մէջ կայա-  
նում է նորանում, որ առաջինում փոխա-  
ղում է պատասխանատուութիւնը իւր  
միմիայն ամէնքի համար և ամէնքի  
միմիայն համար ներկայացնում է մի այն-  
պիսի գրաւական կառավարութեան կամ  
մասնաւոր անձի առաջը, որ սոքա կարող են

փոխ տալ նորան առանց կասկածելու իւրեանց  
գումարի կամ սորա շահի ամբողջապէս յետ  
ստանալու մասին:

Մենք կարծում ենք, որ բաւական պար-  
զեցինք այդ ընկերութիւնների նպատակը և  
նոցա գլխաւոր հիմքը՝ փոխառած երաշխա-  
ւորութիւնը (կրուզովայա պրուկա): Մի-  
բան միայն ցաւալի է, որ մեր ձայնը չի հաս-  
նելու այն դասի ականջին, որ իսկապէս կա-  
րող է նորան և որի համար յատկապէս  
գրուած է նա, որովհետեւ նա միջոց չունի  
ոչ լրագրիներ ստանալու և ոչ նոցա կար-  
գալու: Այն անձինքը, որոնք գտնուելով  
գիւղերում մի և նոյն ժամանակ միջոց ունեն  
հետեւել մեր լրագրութեանը, մեծ ծառայու-  
թիւն արած կը լինէին ընդհանուրին, եթէ  
միւս գիւղացոց մօտ կարգային կամ նոցա  
մէկին այս գործի էութիւնը: Մենք կար-  
ծում ենք, որ այս ուղղակի պարտականու-  
թիւն պէտք է կազմի մեր գիւղական հաս-  
կացող քահանայից համար, իբրեւ միւր այն  
միջոցներից, որոնք վերաբերում են իւրեանց  
ժողովրդի բարօրութեանը: Իսկ եթէ այդ-  
պիսի անձինք մեր առաջարկած կանոնադրու-  
թեան մէջ դարձեալ կը գտնեն անհասկա-  
նալի կամ տեղական պայմաններին աշարմար  
տեղեր, կարող են դիմել դէպի «Մշակի»  
խմբագրութիւնը, որ և ուրախութեամբ կը  
պատասխանէ նրանց մասնաւոր նամակներով  
կամ լրագրի միջնորդութեամբ:

Ժողովուրդը միշտ կասկածաւոր աչքով է  
նայում ամէն բանի վերայ, որ չի բղիւսում  
նորա առօրեայ փորձից. հարկաւոր է ար-  
հեստականապէս դրդել նորան դէպի այն  
ձանապարհը, որով նա ինքը իւր յօժար  
կամքով կ'երթայ ապագայում՝ առաջին յա-  
ջող փորձերից յետոյ:

Ն. Լ.

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Առաջարկում ենք մեր ընթերցողներին վրաց  
«Գրական» լրագրի (№ 11) առաջնորդող յօդվածը  
համարելով նրան ուշադրութեան արժանի:

ՄԵՐ ԺՈՂՈՎՈՐԴԻ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԸ

Ներկայ յօդվածի մէջ մենք կամենում ենք  
կարծ կերպով յայտնել մեր կարծիքը վրաց  
հասարակ ժողովրդի և մեր վաճառականների  
մէջ եղած յարաբերութիւնների վրա: Մենք  
կարծում ենք, որ այդ նիւթը անտեղի և  
տարածած չի երևայ ոչ որքին, մասնաւոր  
այժմ, երբ մեր երկրի ամենալաւ մասերից  
միւր տանջվում է սովից, կարծում ենք որ ոչ  
մի խոհեմ վաճառական չի որոնքի մեր գէժ  
եթէ այդ փողերի յօդվածում մենք մի քանի  
կարական գաղափարներ կը յայտնենք  
նրանց կարգադրականներին մասին:

Ամբողջ աշխարհում չէ կարելի գտնել  
մի ազգ, որի անդամները միմեանցից իրապէս  
բաւական լինէին: Մարդիկ կանքը դժբաղ-  
դապէս այնպէս է ստեղծած, որ հասարա-  
կութեան մի մասը գրեթէ ամեն տեղ ան-  
բաւական է նոյն հասարակութեան միւս